Բիւրօի նախաձեռնութեամբ, ապր. 7–8–ին, Ալեքսանդրապոլում գումարուեց, մի տեսակ, համազգային խորհրդաժողով, որին մասնակցեցին Ազգ. Խորհրդի և Ապահովութեան Խորհրդի անդամները, Սէյմի և Տրապիզոնի պատւիրակութեան հայ պատգամաւորները, քաղաքական կուսակցութիւնների, տեղական ազգային խորհուրդների, հասարակական կազմակերպութիւնների, Երեւան, Ալեքսանդրապոլ ու Կարս քաղաքների ու բանակի ներկայացուցիչները, և մի շարք հասարակական գործիչներ: 1917թ. սեպտեմբերի ազգային խորհրդաժողովից յետոյ հայկական ամենապատկառելի և պատասխանատու հաւաքոյթն էր այս, որ պէտք է որոշէր հայերի վարքագիծը պատերազմի և խաղաղութեան հարցում: Ներկայ էին բազմաթիւ պատասխանատու գործիչներ — Արամը, գօր. Նազարբէգեանը, գօր. Սիլիկեանը, Դրօն, Ա. Ահարոնեանը, Ս. Ցարութիւնեանը, Մ. Պապաջանեանը, Յ. Քաջազնունին, Ա. Խատիսեանը, Ա. Սահակեանը, Ղ. Տէր-Ղազարեանը, Ա. Երզնկեանը, Ս. Մանասեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Վահ. Փափազեանը, Սա. Մամիկոնեանը, Տ. Բէգզադեանը, Ն. Աղբալեանը, Երեւանի ու Կարսի քաղաքագլուխները և այլն:

Պատերազմի և խաղաղութեան մասին դրաւոր զեկուցում կարդաց Յ. Քաջազնունին, որը, իրեն յատուկ տրամաբանական կուռ բանաւորութիւններով, աշխատում էր համոզել՝ թիւրքական պայմաններին համակերպւելու անհրաժեշտութիւնը: Զեկուցումը առաջ բերեց յուզումնալից ու երկարատև վիճաբանութիւններ: Հաշտութեան կողմնակիցների թիւը մեծ չէր — Յ. Քաջազնունի, Մ. Պապաջանեան, Ղ. Տէր-Ղազարեան և մի քանի ուրիշներ: Ահագին մեծամասնութիւնը ժողովականների, բանակի ներկայացուցիչներն ու հրամանատարութիւնը ոգի ի բուն պաշտպանում էին թիւրքական պահանջները մերժելու և պատերազմը շարունակելու անհրաժեշտութիւնը*):

Թիֆլիսից ստացւող լուրերը, սակայն, քիչ էին ներդաշնակւում Ալեքսանդրապոլի տրամադրութիւններին: Հաղորդում էին, որ Անդրկ. Կառավարութեան Թուրք նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով անյապաղ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները և կնքել հաշտութիւն, այլապէս իրենք կը հեռանան Սէյմից ու կառավարութիւնից: Չխենկելիին, կատաղող դէպքերի օգնութեամբ, յաջողւել էր համոզելու իր ընկերներին՝ ընդունել թիւրքերի պայմանները: Այդ պատճառով, Ալեքսանդրապոլի խորհրդակցութիւնը, առանց որոշ վճիռ հանելու, թէև մեծամասնաբար դէմ էր թիւրքերի պահանջներն ընդունելուն, ցրւեց՝ յանձնարարելով իր անդամներին լուծել խնդիրը Թիֆլիսում, ուր կացութիւնը աւելի պարզ էր:

Թիֆլիսում, սակայն, ամէն բան արդէն որոշւած էր. վրացիներն ու թուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել թիւրքական

*) Այս ժողովին մասնակցեց և հայ բոլշևիկ Գ. Մակինցեանը, որը, Արամի յանձնարարութեամբ, Երեւանից գնում էր Մոսկւա՝ յաջողացնելու համար վերջինիս աջակցութիւնը հայ ժողովրդին: Մակինցեանը անցաւ Ռուսաստան և փոխանակ կատարելու իր խոստումը՝ պաշտօնի մտաւ Չէկայի մէջ և միւս հայ բոլշևիկների հետ սկսեց կատաղի պայքար մղել Հայաստանի Հանրապետութեան դէմ: